Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Հայկ. ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս

ՀՈԻՇԵՐ ԱՆՑՅԱԼԻՑ

(Հ. Գյուլիքևխյանի ծննդյան 80-ամյակի առթիվ)

Հասունացող սերունդների առաջին տպավորություններն ու ինքնագիտակցության անդրանիկ ճիգերը հաճախ ամուր հետքեր են թողնում նրանց հետագա զարգացման վրա։ Եվ իզուր չէ, որ երբեմն հենց դրանց իմաստավորմանն են նվիրում նրանք հասուն տարիների իրենց խոհերն ու ստեղծագործությունները։ Այդ դիտեմ ոչ միայն իմ կենսափորձից, այլ նաև դպրոցական ու համալսարանական համատեղ ուսումնառության շրջանից ինձ մտերիմ Հայկ Գյուլիքևխյանի օրինակից։

Նրա հայրը աշխույժ սրտի ու մտքի տեր, բնական հումորով օժտված, հնօրյա մանկավարժ Գաբրիել վարժապետն էր, կառչած 60-ական թվականներին խմորված ազգային-պահպանողական հայացքներին։ Մայրը, տիկին Նատալիան, մեր քաղաքի սակավաթիվ այն կանանցից էր, որոնք տնային գործերից առավել տարված էին արևմտահայերի ազգային-ազատագրական խնդրով և դրա հետ կապված իրենց վաղահաս դաշնակցական հայացքները եռանգով ու աղմուկով պաշտպանում էին թե տանը և թե դրսում։ Շեշտված անհատականության տեր մեկն էր նաև Հայկի հորեղբայրը, Սարգիս վարժապետը, որը հայտնի էր որպես սոցիալ-դեմոկրատական համոզմունքների տեր ժողովրդական ուսուցիչ։

Այս միջավայրում էր հասունանում հանգիստ ու լռակյաց, բայց ուշիմ ու զգայուն մանուկ Հայկի գիտակցության թթխմորը։ Ընտանեկան շրջապատը արթնացնում էր նրա խոհունությունը։

Բայց միայն ընտանեկան հարկի տակ չէր, որ բախվում էին ժամանակի տարամետ հովերը։ Շուշի քաղաքը, ուր ծնվել ու նախապես սնվել էր նա, կովկասահայերի մտավորականության ինքնատիպ հանգույցներից մեկն էր։ Քաղաքը հանգչում էր մանր արտադրողների և առևտրական բուրժուազիայի տնտեսական կապերի վրա և միաժամանակ անդրադարձնում Ռուսաստանում և Կովկասում իշխող ազգային, սոցիալական և քաղաքական հակասությունները։

Մեր մանկության ու պատանեկության տարիներին այդտեղ արդեն իսկ առկա էին այն խմբավորումները, որոնք լիցք ու ուղղություն էին տալու մեր սերնդի զարգացմանը։

Իննսունական թվականների սկզբներին մեր քաղաքի հայ մտավորականությունը տրոհված էր կուսակցությունների, մշակականների և նոր-դարականների կամ որ միևնույնն է լիբերալների և պահպանողականների՝ և ժամանակ էր ծախսում ազգային-ծխական վեճերի վրա։ Գրեթե նույն այդ պահին աս-

պարեզ էին իջնում հեղափոխական պիտակ կրող այն հոսանքները, որոնք ձևավորում էին հնչակյան և դաշնակցական տրամադրություններով տարված երիտասարդության մտքերը։

Ժամանակի ազդեցիկ և ինքնավստահ գործիչներից էր քաղաքի թեմական դպրոցի տեսուչ Լևոն Սարգսյանը։ Դաշնակցության հիմնադիրներից ու ղեկավարներից մեկն էր նա և սկզբնապես այդ կուսակցության մեջ իշխած ազգային-լիբերալ ուղղության դրոշակակիրը։ Մի տասնամյակ անց իր խմբագրությամբ լույս տեսնող «Մուրճ» ամսագրի էջերում մարտական խառնվածքով օժտված այդ գործիչը աղմուկով ու շռինդով ճակատելու էր իր իսկ մերձավոր գործակցությամբ ասպարեզ եկած կուսակցության դեմ։

Սարգսյանի տեսչության օրոք Շուշվա թեմականում ուսուցչության պաշտոն էր վարում մեղմախոս ու համեստ մի մտավորական՝ Գևորգ Ղարաջյանը, որը տակավին իր ուսանող եղած տարիներին, 80-ական թվականների վերջերին, ժնևում սոցիալական գիտություններ սովորելիս, հարել էր Պլեխանովի գլխավորած «Աշխատանքի ազատագրություն» խմբին։ Ղարաջյանը առաջիններից մեկն էր ոչ միայն հայ, այլև անդրկովկասյան միջավայրում մարքսիզմի ճանապարհի վրա ոտք դնողներից։ Արդեն իսկ իր ուսանողական տարիներին «Մշակ»-ում և ապա Արասխանյանցի «Մուրճ»-ում տպված իր թղթակցություններում ու հոդվածներում նա առաջինն էր մեզանում, որ աշխատանք էր սկսել մարքսիստական հայացքների պատվաստման ուղղությամբ։ 1897—98 թվականներին Թիֆլիսում ձեռնարկեց հայ բանվորների ինքնազարգացման ընդհատակյա խմբակների կազմակերպմանը՝ ունենալով գործունեության շեշտված սոցիալ-դեմոկրատական ուղղություն։ 90-ական թվականների վերջերից գործում էր Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական ընդհատակյա կոմիտեի կազմում։ Ցավալի է ի դեպ, որ այս գործչի նշանակալից դերը ինչպես նաև նրա անտիպ բազմաթիվ աշխատությունները գրվանի տակ են մնում տակավին և իրենց արժանի տեղը չեն գտնում գիտական սոցիալիզմի և մարքսիզմի տարածմանը նվիրված լուսաբանությունների մեջ։

Մեր մանկության տարիներին Շուշվա պատանեկությունը գտնվում էր Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարով տարված հնչակյան և դաշնակցական կուսակցությունների ազդեցությունների տակ։ Այդ տրամադրությունների ծավալմանը յուրովի զարկ էին տալիս ժամանակի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը։ Կապիտալիզմի զարգացման շոշափուկները տարածվում էին նաև Անդրկովկասի հայաբնակ գավառների վրա, սաստկացնում մանր արտադրողների և առաջին հերթին գյուղացիության շերտավորումը։ Այդ պրոցեսը զգալի էր հատկապես Ղարաբաղում և Զանգեզուրում, ուսկից զանգվածային արտագնացություն էր սկսված դեպի Կովկասի արդյունաբերական շրջաններն ու Անդրկասպյան երկիրը։

Ըստ էության արտագնացության տարատեսակություններից մեկն էր, նույն այդ տարիներին Թուրքիայում իշխող բռնատիրության դեմ ազատագրական պայքար սկսած հայերին օգնության գնալու հետամուտ կովկասահայ դավառներում ծայր առած և հետզհետե ծավալվող շարժումը։

Դպրոցականների մեջ նախապես գերակշռում էին հնչակյանները։ Մինչև իննսունական թվականների կեսերը «երկիր» մեկնող շուշեցի երիտասարդների մեջ աչքի էին ընկել Գաբրիել Կաֆյանի պրոպագանդիստական գործունեությունը և մանավանդ մարտերում նահատակված Բարսեղ Զաքարյանի ու

Մարտիկ Սարուխանյանի սխրանքները։ Հաջորդ դարի սկզբներին որպես ֆեդայիներ, պրոպագանդիստներ և կազմակերպիչներ «երկիր» գնացին դաշնակցական երիտասարդները՝ Եգոր Առստամյանը, Թուման Թումյանը, Նիկոլ Միքայելյանը, Մարգար Ժամհարյանը և վերջապես Սարգիս Հովհաննիսյանը, հետագայի Արամ Մանուկյանը, Սարդարաբադի հերոսամարտի կազմակերպիչներից մեկը։

Սակայն մեր համաքաղաքացիներից էին նաև այն երիտասարդները, որոնք իննսունական թվականների վերջերից, ոտք դնելով հեղափոխական մարքսիզմի գետնի վրա, նվիրվեցին Անդրկովկասում ծավալվող բանվորական շարժմանը և գիտական սոցիալիզմի պրոպագանդային։ Սրանց շարքին էին պատկանում 1905 թ. Պետերբուրգի բանվորական սովետների նշանավոր ղեկավարներից մեկը, անվեհեր Բոգդան Կնունյանցը, հին բոլշևիկներ՝ Ալեքսանդր Բեկզադյանը, Իվան Մելիք-Հովսեփյանը, Բաղդասար Ավագյանը, Սաքո Համբարձումյանը և ուրիշներ։

Հայ մարքսիստների ավագ սերնդի այս երիտասարդների նախօրինակով է, որ դարասկզբին սկսում են խմորվել մեր սերնդի պատանեկության մրտքերը։ Մարքսիստ համերկրացիների ոգով դաստիարակվողների մեջ էին նաև մեր ընկերներից երկուսը, որոնք Ալեքսանդր Բեկզադյանի հետ մեկտեղ մրտնելու էին Սովետական Հայաստանի 1920 թվականին կազմակերպված Հեղկոմի մեջ՝ Սահակ Տեր-Գաբրիելյանը և Իսահակ Դովլաթյանը։ Չմոռանամ ասել, որ 1903—1905 թվականներին մեր հայացքների ձևավորման վրա անմիջական ներգործություն են ունեցել ռեալական դպրոցի բնագիտության մեր դասատուն՝ Լյուդվիգ Ստաբրովսկին և երկու-երեք տարով մեզնից տարեց դպրոցական մեր ընկերը՝ Վլադիսլավ Կասպարովը։

Դիտողության արժանի երևույթ է, որ ինչպես իննսունական թվականների վերև նշված մեր համաքաղաքացի հնչակյան երիտասարդները, այնպես նաև նրանց հաջորդած մարքսիստ երիտասարդները միջնակարգ կրթություն էին ստացել մեր դպրոցում, Շուշվա ռեալականում, ուսկից հետագայում անցել էին Ռուսաստանի բարձրագույն դպրոցներ։ Որպես կանոն դաշնակցական երիտասարդները դուրս էին գալիս քաղաքի թեմականից։ Բացառապես հայ ազգային մշակույթի ազդեցությանը ենթարկված՝ նրանք դժվարությամբ էին ընկալում գիտական սոցիալիզմ և ինտերնացիոնալիզմ պրոպագանդող մարքսիզմը, քան բնական և հանրակրթական գիտելիքներ յուրացնող ռեալիստները։ Հարկավ լինում էին նաև բացառություններ։ Ռեալիստներից դաշնակցականների շարքերն անցան Միքայել Հովհաննիսյանը (Մ. Վարդանյան), Մարգար Ժամհարյանը և սկզբնապես նաև Լևոն Աթաբեկյանը, որի դաշնակցականների դեմ ուղղված քննադատությունը այնուամենայնիվ սոցիալիստ-հեղափոխական կուսակցականությունից հեռուն չգնաց։

1905 թ. հեղափոխության նախօրեին Գյուլիքևխյանի և իմ հայացքների մշակման վրա ազդում էին գրական հրապարակը հեղեղող թերթերն ու բրոշյուրները։ Մարքսի ու Էնգելսի դժվարամարս երկերից ավելի անմիջական էր նրանց հետևորդների ազդեցությունը։ Մեր աշակերտության տարիներին լարված ուշադրությամբ կարդում էինք Կաուցկու և մանավանդ Պլեխանովի հայտնի աշխատությունները։ Այդ ժամանակ մեզ գրաղեցրած ստվար գրքերից ոչ մեկը ազդեցության այնքան խոր հետք չի թողել մեզ վրա, որքան Պլեխանովի «Очерки развития монистического взгляда на историю» աշխատու-

թյուններ։ Լենինի գործերից մեզ մատչելի դարձան ավելի ուշ՝ մեր ուսանողության տարիներին։ Հիշում եմ սակայն, որ նրա երկերից մեկը տեսա դեռ դպրոցի նախավերջին դասարանում։ Ես ու Կասպարովը նստում էինք վերջին նստարանին։ Ռուսաց լեզվի դասի ժամանակ Սլավան ծնկի վրա թերթում էր ստվար մի հատոր։ Դասատուն՝ Լյոնտևը այդ նշմարեց և նկատողություն արեց նրան։ Դա Լենինի «Развитие капитализма в России» նշանավոր գիրքն էր, որը լույս էր տեսել «Վ. Իլյին» կեղծանունով։ Սլավան ինձ ասաց, որ այդ անվան տակ թաքնված է բոլշևիկների գլխավոր տեսաբանը՝ Լենինը։

Պատմական մատերիալիզմին նվիրված գրականությունից զատ, ինձ հետաքրքրած գրքերի մեջ մեծ տեղ էին բռնում հայոց պատմության ու գրականության հետ առնչված գրքերը։ Չորրորդ դասարանի աշակերտ էի, երբ հափշտակությամբ կարդում էի Ռաֆֆու և Լեոյի գրվածքները։ Շատ հավանեցի վերջինիս «Հայկական տպագրությունը», որի ազդեցությամբ ընկա Эзов-ի նշանավոր ռուսերեն ժողովածուի հետքի վրա։ Վերջինիս մտառու ուսումնասիրությունը հետագայում ինձ մղում տվեց գրելու իմ համալսարանական դիսերտացիան։

Գյուլիքևխյանի նախասիրությունները իմինից տարբեր էին։ Նրան առավելապես զբաղեցնում էր ռուս և եվրոպական գեղարվեստական գրականությունը։ Արդեն իսկ դպրոցի վերջին դասարանում ուշադիր կարդում էր ռուս գրական քննադատության կլասիկներին։ Միաժամանակ նրան հետաքրքրում էր արևմտաեվրոպական փիլիսոփայական գրականությունը։ Լավ հիշում եմ, որ մի օր նրա ձեռքին տեսա հետագա իր պրոֆեսորներից մեկի, Վ. Վունդտի հոգեբանության և նույնիսկ Կունո Ֆիշերի «Հեգելի» ռուսերեն թարգմանությունները։

Մեր մտահորիզոնի ընդլայնմանը նպաստում էին մարքսիստական խմբակները և մանավանդ հրապարակային դիսկուսիաները։ Սակայն, ինչպես մեր օրերին, մեր պատանեկության ժամանակ ևս հասունացող սերունդը մրտավոր սնունդ և քաղաքական դաստիարակություն էր ստանում ոչ այնքան գրքերից ու դիսկուսիաներից, որքան ժամանակի իրադարձություններից։ Առավել ուսանելի ու հետաքրքրական էին դառնում հենց այն գրքերն ու դիսկուսիաները, որոնք առնչվում էին ընթացիկ կյանքի հետ և օգնում ակտիվ կողմնորոշում մշակելու կատարվող իրադարձությունների գնահատման ու իմաստավորման հարցերում։

Մարքսիստների և ազգային կուսակցությունների գաղափարական բախումները գնալով լայն ծավալ էին ստանում, մանավանդ 1905 թ. հեղափոխության ժամանակաշրջանում։ Հրապարակային ընդարձակ դիսկուսիաների նյութ էին դառնում Գոլիցինի ազգային քաղաքականության, հայ եկեղեցական կալվածների բռնագրման, հոնվարի 9-ի դեպքերի և հայ-թաթարական ջարդերի հետ կապված հարցերը։ Խիստ բազմամարդ դարձան դիսկուսիաները, երբ հակադիր տեսակետներով ու բուսաբանության փորձերով հանդես եկան Լևոն Աթաբեկյանը, Տիգրան Իսախանյանը, Իսահակ Դանիելբեկյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Սիմոն Նարինյանը, Դ. Տեր-Դանիելյանը (Դ. Անանուն) և այլն։ Քննարկման նյութ էին դառնում «Սոցիոլոգիան և նրա դպրոցները», «Ռուսական հեղափոխության նարոդնիկական ու պրոլետարական էտապները», «Ցարիզմի ազգային քաղաքականությունը Կովկասում», «Հայ-թաթարական ջարդերի պատճառները» և նման այլ թեմաներ։

Ի վերջո եղավ նաև այնպես, որ դուրս գալով գահավիժող անցքերը դիտողների վիճակից, մենք ևս մասնակից էինք գառնում դրանց։ 1905 թ. հունվարյան դեպքերին, նույն տարվա գարնան ամիսներին, յուրովի արձագանքեցինք նաև մենք՝ ռեալական դպրոցի աշակերտության աղմկահույզ դասադուլով։

Այդ ելույթի համար անմիջական մղումներ էինք ստացել սոցիալ-դեմոկրատ ուսանողներից։ Դպրոցի վարչությանը ներկայացվելիք պահանջագրի մշակմանը մասնակցություն ունեցան մեզանից շատերը, այդ թվում նաև Գյուլիքևխյանը և ես։ Առանձնապես ակտիվ էր Սաքո Սահակյանի (հետագայում էսեռ) և Վլ. Կասպարովի մասնակցությունը։ Հիմա լավ չեմ հիշում մեր պահանջագրի բովանդակությունը։ Մտաբերում եմ միայն, որ առաջարկում էինք դպրոցից հեռացնել ռեակցիոն ուսուցիչներից ոմանց և պարտադիր դարձնել ազգային լեզուների դասավանդումը։

Դասադուլը սկսեցինք դասի ժամանակ։ «Կորչի ցարիզմը» բացականչություններով միջանցքները թափվեցին բարձր դասարանների աշակերտները։ Մեկը բերել էր իր հետ կարմիր մի լաթ, որը ձեռքերի վրա ծածանվեց որպես դրոշ շփոթություն առաջացնելով ուսուցիչներից ոմանց մեջ։ Խանդավառված պատանիներից ոմանք սկսեցին փշրել փողոցի կողմի լուսամուտների ապակիները, որ նախատեսված չէր բնավ։ Այդ դուր եկավ շատերին, որոնք շարունակեցին անել նույնը՝ ինչպես և ինչով կարող էին։ Հետագայում մեզ մեղադրում էին այն բանում, թե իբր մի քանի հարյուր ռուբլու ապակի ենք փշրել։

Քաղաքացիները խռնվել էին դպրոցի առջև և ոչ մի կերպ չէին հասկանում ծավալված աղմուկի և փշրոցի իմաստը։ Շքամուտքի մոտ խմբվել էր ոստիկանությունը՝ ոստիկանապետ Սախարովի գլխավորությամբ։ Վերջինս կամենում էր դպրոց մտնել «վերականգնելու կարգը»։ Մեր դիրեկտորը՝ Եվգենի Կոնոկոտինը՝ կտրականապես մերժեց նրա պատրաստակամությունը. հայտնեց, որ ինքն է դպրոցի տնօրենը և միայն իրեն է վերապահված խախտված կարգը վերականգնելու պարտականությունը։ Հետագայում ցարական ոստիկանությունը նրան մեղադրեց այն բանում, թե չի ջանացել դպրոցի աշակերտներին հեռու պահել հեղափոխության շորշոփներից։ Իր հերթին Կոնոկոտինը մեղադրում էր ոստիկանությանը, որ այն չի կարողացել այնպես դիմադրել հեղափոխությանը, որ վերջինս ազդեցություն չգործեր աշակերտների վրա։

Քանի օր անց դիրեկտորը փորձեց իրեն օգնության կանչել ծնողական ժողովին։ Սակայն ծնողական ժողովում ելույթներ ունեցան սոցիալ-դեմոկրատ ուսանողները, սուր խոսքեր ուղղեցին թե ցարական ռեակցիայի և թե դպրոցական վարչության դեմ։

Թեպետև մոտ երկու ամսով կանգ առան մեր պարապմունքները և հարցաքննություն եղավ կովկասյան հոգաբարձության կողմից, այնուամենայնիվ, որոշ դրական արդյունքի չհանգեց դասադուլը։ Դիրեկտորի բռնած դիրքը դասադուլի իսկ սրահին հոգեբանական շրջակետ դարձավ դեպքերի հետագա ընթացքի համար և ծանրություն տվեց մեր տրամադրությունների վայրէջքին։

Հետագայում և՛ Գյուլիքևխյանը և՛ ես չէինք կասկածում, որ տիրող ռեժիմի հարատևումից զատ գործադուլի վիժմանը նպաստեց հենց դիրեկտորի լիբերալ գործելակերպը, որով նա կարծես դասատուլավորների հետ ընդհա-

նուր ճակատ ստեղծեց ոստիկանության դեմ։ Երևի հենց դրա համար էլ նրան հեռացրին դպրոցից։

Դասադուլի նախաձեռնման մեջ նշանակալից էր սոցիալ-դեմոկրատների մասնակցությունը։ Երկրորդական էր դաշնակցությանը հարող «Կովկասյան հայ աշակերտական միության» անդամների դերը։ Թեպետև դաշնակցությունը առհարկի բռնել էր ցարիզմի դեմ պայքարելու ուղին, գործնականում այն շարունակում էր դեգերել «հին» և «նոր» գործոնների, «հայդուկային» և «սոցիալիստական» մտածելակերպի կամ «հեղափոխական» և «լիբերալ» գործելակերպի արանքում։ Հանդամանք էր այս, որ մեծապես նպաստում էր նրա նկատմամբ մեր քննադատական վերաբերմունքի սրմանը և մեր սոցիալ-դեմոկրատական գիտակցության հստականալուն։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիային հարելու համար Գյուլիքևխյանին և ինձ մնում էր հաղթահարել վերջին մի նախապաշարմունք միայն՝ կուսակցության կազմակերպման ազգային սիստեմը։ Այդ սիստեմի անհեթեթությունը մեզ համար գործնականապես ակներև դարձավ փոքր-ինչ հետո միայն՝ մեր համալսարանական ուսումնառության սկզբնաշրջանում, երբ Գերմանիա անցնելով, շփման մեջ մտանք ռուս ուսանողական գաղութի և նրա սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ։ Այլևս կասկած չմնաց, որ միայն կազմակերպության միջազգային կամ տերիտորիալ-արտադրական սիստեմը կարող է հիմք դառնալ ու ապահովել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական և մարտական միասնությունը։

* * *

1906 թ. աշնանը Գյուլիքևխյանը և ես մտանք Ենայի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը։ Մեծ ջանասիրությամբ սկսեցինք հաճախել պրոֆ. Ռայնի ընդհանուր մանկավարժության դասախոսությունները։ Մեզ հետաքրքրողը մանկավարժությունը չէր, այլ պրոֆեսոր Ռայնի պարզ ու հնչեղ առոգանությունը, որի օգնությամբ որոշեցինք յուրացնել գերմաներենը։ Մասամբ նույն նպատակով էինք հաճախում նաև նշանավոր փիլիսոփաներ Օտտո Լիբմանի և Ռուդոլֆ Եյկենի լսարանները և երբեմնակի լսում աշխարհահռչակ Հեկկելի դասախոսությունները։

Գյուլիքևխյանի հետ մեկտեղ 1907 թվականի գարնանը մեկնեցինք Ապոլդա քաղաքը, ուր ռայխստագի ընտրապայքարի կապակցությամբ ելույթ պետք է ունենար Ավգուստ Բեբելը։ Հսկայական հանդիսասրահում հավաքված ընտրողների առջև ելույթ ունեցավ գերմանական պրոլետարիատի պարագլուխը։ Սրահում ներկա բուրժուական լիդերների բացականչությունները նպատակ ունեին խաթարել Բեբելի խոսքի տպավորությունը։ Համայիշ էր ծերունի հռետորի հանգիստ կեցվածքը և մանավանդ նրա անվրեպ պատրաստաբանությունը, որով կասեցնում էր հակառակորդներին՝ անգուսպ հոհոց առաջացնելով սրահում։ Հեռացանք Ապոլդայից հիացքով լի։

1907 թվականի ամառային սեմեստրում Գյուլիքևխյանի և իմ համատեղ ուսումնառության ուղիները բաժանվեցին։ Ես մտա Հալլեի և այնուհետև Մյունխենի համալսարանը՝ պատմություն ուսանելու։ Գյուլիքևխյանը մեկնեց Լայպցիգ, ապա անցավ Ցյուրիխ և Հայդելբերգ զբաղվելու փիլիսոփայությամբ ու հարակից առարկաներով։

Տակավին լատիներենի իմացության վկայական չունենալով՝ Լայպցիգում Գյուլիքևիչյանը ձևապես ուսանող գրվեց տեղի առևտրական բարձրագույն դպրոցում (Handelshochschule-ում), սակայն փաստապես ունկնդրում էր համալսարանի դասախոսությունները։ Նրա հարցասիրությունները հանրագիտական բնույթ ունեին։ Լսում էր, ինչ հետաքրքրում և զբաղեցնում էր իր միտքը։ Նշանավոր տնտեսագետ Բյուխերից զատ այցելում էր փիլիսոփա-հոգեբան Վունդտի, պատմաբան Լամպրեխտի, գրականագետ Վիտկովսկու և Ֆոլկելտի էսթետիկայի դասախոսությունները։ Իհարկե, նշում եմ միայն այն, ինչ մընացել է հիշողության մեջ իր իսկ պատմածներից։

Երբ 1909 թվականին իրեն այցի էի գնացել Լայպցիգ՝ Գյուլիքևիչյանը ինձ տարավ լսելու իր ուսուցիչներից ոմանց։ Հիշողությանս մեջ խորապես տպավորվեց ծերունի Վունդտի Դոստոևսկուն նմանող արտաքինը։ Խոսում էր Լայբնիցի մասին՝ խորհրդավոր ինտոնացիայով և ներհուն վերլուծությամբ։ Բյուխերը կարդում էր Գերմանիայի միջնադարյան քաղաքների տնտեսական համակարգի մասին։ Չնայած այդ գիտնականի դրվածքները հղկված ու պայծառ շարադասություն ունեն, կարդում էր վերին աստիճանի միատոն ու տաղտկալի։ Ըստ էության մակերեսային, բայց հռետորական փայլուն իմպրովիզացիայի տպավորություն արեց Կարլ Լամպրեխտի՝ գերմանական մշակույթի պատմության պարբերացմանը նվիրված դասախոսությունը։

Գյուլիքևիչյանի Ցյուրիխի և Հայդելբերգի զբաղմունքների մասին ինձ հայտնի չէ գրեթե ոչինչ։ Գիտեմ միայն, որ Հայդելբերգում նա լսել է նեոկանտյան ուղղություններից մեկի հիմնադիր Վինդելբանդին և նրա հանձնարարությամբ ձեռնարկել էր գրելու իր դոկտորականը։ Սակայն վերահաս առաջին համաշխարհային պատերազմը խափանում է նրա զբաղմունքները։ Գերության առնվելով, շուրջ չորս տարի Վինդելբանդի հայ աշակերտը դեգերեց պատերազմի ճամբարներում և հնարավորություն ստացավ վերադառնալ Ռուսաստան միայն պատերազմը վերջանալուց հետո։

1918—1919 թվականներին է, որ ես նորից հանդիպեցի Գյուլիքևիչյանին, նախ Մոսկվայում, ապա՝ Աստրախանում։ 1921—1927 թվականներին Սովետական Հայաստանում մենք կապված էինք իրար հետ համատեղ կուսակցական աշխատանքով։

* * *

Այդ շրջանի, ինչպես նաև հետագա տարիների նրա գրական-գիտական աշխատանքի բնույթը հանրածանոթ է։ Այնուամենայնիվ թող անտեղի չլինի մի քանի խոսք ասել այդ մասին։

Նախասովետական շրջանի մարքսիստական հայ գրականության մեջ արծարծում էին առանձին արժեքավոր դրույթներ ու մեթոդոլոգիական սկզբունքներ։ Արվեստի ու գրականության մարքսիստական սիստեմատիկ ուսումնասիրությունը հնարավոր և անհրաժեշտ դարձավ միայն սովետական շրջանում, և Գյուլիքևիչյանը առաջիններից մեկն էր, որ ոտք դրեց այդ բնագավառում իբրև գրականագիտական, էսթետիկական և փիլիսոփայական լայն ընդհանրացումների ատակ մարքսիստ գիտնական։

Չեմ կարող շրջանցել մանավանդ նրա գրականագիտական ուսումնասիրություններից մեկը։ Նկատի ունեմ Բաֆֆու «Կայծեր»-ի քննադատությունը, ուր նա վերլուծում էր պատանեկության օրերին մեզ հուզած հարցերը։ Իր հա-

սուն տարիներին հեղինակը լուսաբանում էր այդ նյութը՝ զգալապես վերարտադրելով արևմտահայ ազատագրական շարժման նկատմամբ հայ մարքսիստների հին սերնդի տեսակետը։ Գյուլիքևխյանի այդ ուսումնասիրությունը խիստ այժմեական է Ռաֆֆու և նրա գաղափարախոսության մարքսիստական գնահատման համար նաև մեր օրերին, երբ փորձեր են լինում մոռացության տալ կամ աղարտել հայ մարքսիստների ավագ սերնդի ըմբռնումներն այդ հարցում։

«Կայծեր»-ի քննադատությունը Գյուլիքևխյանը գրել է 1946 թվականին և հրապարակել 1947 թվականին, այսինքն՝ տակավին անհատի պաշտամունքի տիրապետության շրջանում, երբ անհնարին էր ճշմարիտ խոսք ասել Ռաֆֆու մասին, առանց երկյուղ կրելու, թե նացիոնալիստի համբավ կարելի էր վաստակել դրանով։ Եվ թերևս հենց այդ է պատճառը, որ իր ուսումնասիրության մեջ ակնհայտորեն գերագնահատված է Ռաֆֆու լիբերալիզմը և թերագնահատված նրա դեմոկրատիզմը։

Պետք է այնուամենայնիվ դիտեմ, որ Գյուլիքևխյանի քննադատությունը ըստ էության հակադրվում էր սովետահայ գրականագիտության մեջ անհատի պաշտամունքի տարիներին Ռաֆֆու մասին տարածված թյուր կարծիքներին։ Այսպես, երբ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը քննադատը բնութագրում էր որպես բուրժուա-դեմոկրատական կարգերի հաղթանակի համար թուրքական ֆեոդալիզմի դեմ մղված պայքար, նա մերժում էր այն տեսաբանների հայացքը, որոնք արևմտահայ շարժման մեջ սոսկ Թուրքիայում շուկա որոնող կովկասահայ բուրժուազիայի շահախնդրություններ էին նշմարում։ Նման տեսաբաններին առարկելով, Գյուլիքևխյանը համարձակորեն արձանագրում էր, որ արևելահայ բուրժուազիան հիմնականում հետևում էր ցարիզմի քաղաքական գծին և բնավ չէր ոգևորվում իր կապիտալը Արևմտյան Հայաստանում շահեցնելու հեռանկարով։

Սակայն քննադատի միտքը ավելի խորն էր ակոսում Ռաֆֆու գաղափարախոսական ենթահողը, երբ նմանություններ էր նշմարում ռուս նարոդնիկների և «Կայծեր»-ի հերոսների դեպի ժողովուրդն ունեցած վերաբերմունքի մեջ։ Քննադատը նմանություններ էր տեսնում Ռաֆֆու հերոսների և նարոդնիկների միջև։ Չնայած, որ տարբերանշում էր Ռաֆֆու հայացքները նարոդնիկների ձգտումներից, նա հայ վիպասանի հայացքների վրա նշմարում էր նարոդնիկական թեորիայի ու պրակտիկայի որոշակի ազդեցությունը։ Եթե նարոդնիկները ասում էին, թե ռուս համայնքի շնորհիվ՝ ռուս մուժիկը բնածին սոցիալիստ է և նրան գիտակից սոցիալիստ դարձնելու համար պակասում է միայն ինքնագիտակցությունը, Ռաֆֆին իր հերթին համոզված էր, որ ազատասիրությունը հատուկ է բոլոր ժողովուրդներին. բավական է, որ հայ գյուղացուն ինքնագիտակցության մղես և գործի հրահրես, որպեսզի նա զենք առնի՝ ազատություն նվաճելու համար։ Գյուլիքևխյանը նույնիսկ գաղափարաբանական խաչաձևումներ էր տեսնում Ռաֆֆու և Միխայլովսկու «հերոսների և ամբոխի» կամ Լավրովի՝ «քննադատորեն մտածող անհատների» մասին պաշտպանած հայացքների միջև։

Ուշագրավ է մասնավորապես Գյուլիքևխյանի հայացքը Ռաֆֆու գրական ուղղության մասին։ Եթե «Կայծեր»-ի ռեալիստական մոտիվները քննադատը համարում էր Թուրքիայում և Պարսկաստանում իշխած ֆեոդալական կարգերի ու դասակարգերի քննադատության արտահայտություն, ապա վեպի ռո-

մանտիկական տարրերը համարում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժման հաղթանակին նպաստող օբյեկտիվ պայմանների բացակայության հետևանք, այլ խոսքով՝ իրականության և իդեալի միջև եղած խոր հակասության արդյունք։ «Կայծեր»-ի ռոմանտիզմի աղբյուրը Գյուլիքևխյանը տեսնում էր նույն այն հակասության մեջ, որը արևմտահայ շարժումը ղեկավարող կուսակցություններին հետագայում տրամադրում էր «հայկական հեղափոխության» ֆրազի օգնությամբ վարագուրել իրենց մերկապարանոց ռեֆորմիզմը։ Գյուլիքևխյանը իրավացիորեն հրաժարվում էր հեղափոխական համարել մի շարժում, որի ռեալ նպատակը Բեռլինի վեհաժողովի հաստատած ռեֆորմներից դենը չէր միտում և փաստորեն դեմ էր առնում արևմտահայ ժողովրդի ազատագրման հետ անհամատեղելի Թուրքիայի status quo-ն պաշտպանող եվրոպական դիվանագետների քաղաքականությանը։

* * *

Հայկ Գյուլիքևխյանի կյանքի պատմությունը հատկանշական է մեր սերընդի մարքսիստ մտավորականի համար։ Նրա քաղաքական գիտակցությունը արթնացել էր 1905 թվականի հեղափոխության ժամանակաշրջանում։ Ժամանակաշրջանի հուզող հակասությունները լուսաբանելու և լուծելու համար նա ելք գտավ հեղափոխությունը ղեկավարող և այն դեպի Հոկտեմբերյան հաղթանակը առաջնորդող լենինյան դրոշի ներքո։ Գյուլիքևխյանը նվիրված էր այդ դրոշին զգայուն սրտի և խոհուն մտքի բոլոր թելերով ու ամբողջ հավատարմությամբ։

Այսօրվա սերունդը ի վիճակի է դատելու Գյուլիքևխյանի մասին սոսկ նրա գրական ժառանգության հիման վրա։ Սակայն գիտնականի և գաղափարական գործչի նշանակությունը միշտ չէ, որ չափվում է նրա գրվածքներով։ Գրական-գիտական իրողությունների կենդանի ազդակները հաճախ մնում են վարագույրի ետևում։ Լինում է նաև այնպես, որ նրա ազդեցության մասին վկայում են ժամանակակից հուշագրողների կամ բանաստեղծների կծու էպիգրամները միայն։

Հայկ Գյուլիքևխյանը մեկն էր սովետահայ այն մարքսիստ գիտնականներից, որոնք ազդեցության խոր հետքեր են թողել սովետահայ գրականագիտության մեջ և բեղմնավորել սովետահայ գրողներից ոմանց տաղանդի հասունացումն ու դրսևորումը։

Քսանական-երեսունական թվականների սովետահայ գրական-գիտական կադրերի դաստիարակման կամ այդ ժամանակաշրջանի սովետահայ գրական-քննադատական մտքի կազապարմանը ծառայած նրա գործերից նվազ նշանակալից չէին նրա դասախոսությունները, զրույցներն ու կոնսուլտացիաները։ Երիտասարդ այդ կադրերի մտքերի ու զգացմունքների զարգացմանը նա օժանդակում էր ոչ միայն իր հանրագիտական հմտություններով, այլև իր նկարագրի առինքնող հմայքով, պարզ ու վճիտ իր բնավորությամբ ու անհատականությամբ։

Չի կարող մոռանալ նրան, ով երբևէ լսել է նրա հոգեթով ծիծաղը, որի մեջ արտացոլվում էր և նրա մտերմությունը զրուցակցի հետ և նրա ներողա-

միտ վերաբերմունքը դեպի հակառակորդների մարդկային թուլությունները։ Վերացական ընդհանրացումների միտված այդ գիտնականը հոգու մանկական պարզություն ուներ։

Զուր չէ, որ նրա անունը միշտ հուզիչ սիրով են հիշում նրանից խորհուրդներ և ստեղծագործական մղումներ ստացած գրողներն ու քննադատները, գիտական գործակիցներն ու բազմաթիվ աշակերտները։